որոշումը ևս ենթակա է անվավեր ճանաչման:

Արդյունքում, Դատարանը եզրահանգում է, որ ներկայացված պահանջները հիմնավոր են և ենթակա բավարարման:

6. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու մասին եզրահանգումները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ պարագայում, դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից, Հայցվորի կողմից նախապես վճարվել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, հետևաբար Դատարանը գտնում է, որ Պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել վերջինիս կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 360-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՌՈՒՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-25/6 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 16.07.2025թ. նիստի թիվ 2-4 արձանագրությամբ «ՊՐՈՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և «ՊՐՈՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել:

2. Անվավեր ճանաչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-25/6 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 16.07.2025թ. նիստի թիվ 2-4 արձանագրությամբ «ՊՐՈՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և «ՊՐՈՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումները:

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «ՌՈՒՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության բռնագանձել 100 000 ՀՀ դրամ գումար՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

6. Օրինական ուժի մեջ մտած վճիռը կատարման ենթակա մասով կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն

ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Արմինե Սաֆարյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am